ՈՐՈՇՈՒՄ
ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհուրդը որոշում է:

1. Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանին տալ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների ոլորտների կադրերի պատրաստման բազային կազմակերպության կարգավիճակ:

2. Հաստատել ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների ոլորտների կադրերի պատրաստման բազային կազմակերպության կանոնակարգը (կցվում է):

3. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման օրից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է նրա՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում, հիշյալ ընթացակարգերի կատարման վերաբերյալ ծանուցումը ավանդատուին պահպանման տալու օրից:

Կազմված է Մոսկվա քաղաքում 2003 թվականի ապրիլի 25-ին ռուսերեն՝ մեկ բնօրինակով: Բնօրինակը պահպանվում է ԱՊՀ գործադիր կոմիտեում, որը այս որոշումը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի նրա հաստատված կրկնօրինակը:

Հաստատված է
Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանին
Անկախ Պետությունների Համագործակցության
մասնակից պետությունների հումանիտար եւ
սոցիալ-տնտեսական գիտությունների
ոլորտների կադրերի պատրաստման բազային
կազմակերպության կարգավիճակ տալու մասին
ԱՊՀ պետությունների կառավարությունների
ղեկավարների խորհրդի՝ 2003 թվականի
ապրիլի 25-ի որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների ոլորտների կադրերի պատրաստման բազային կազմակերպությունը (այսուհետ՝ Բազային կազմակերպություն) ստեղծվում է ԱՊՀ մասնակից պետություններին հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների ոլորտների կադրերով ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով Համագործակցության մասնակից պետությունների ինտեգրացիոն գործընթացների զարգացումները:

Բազային կազմակերպության կարգավիճակը տրվում է Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանին (այսուհետ՝ ՍՊԲՊՀ):

2. Իր գործունեության ընթացքում Բազային կազմակերպությունը ղեկավարվում է ԱՊՀ պետությունների կանոնադրությամբ, Համագործակցության պետությունների ղեկավարների եւ կառավարությունների ղեկավարների խորհուրդների որոշումներով, Համագործակցության շրջանակներում ընդունված՝ կրթության ոլորտի միջպետական եւ

միջկառավարական համաձայնագրերով ու պայմանագրերով, ինչպես նաեւ այս կանոնակարգով:

3. Բազային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ԱՊՀ գործադիր կոմիտեի, ԱՊՀ մասնակից պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի, Համագործակցության մասնակից պետությունների կրթության ղեկավարման օրգանների հետ փոխգործակցությամբ եւ ամեն տարի տեղեկացնում է նրանց իր գործունեության մասին:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բազային կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են.

մասնագետների պատրաստում հետեւյալ ուղղություններով ու մասնագիտություններով՝ պատմություն, աշխարհագրություն, տեղագիտություն, իրավագիտություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, կառավարում (մենեջմենտ), հոգեբանություն,

մասնագետների որակավորման բարձրացում եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստում հետբուհական կրթության տարբեր ձեւերով (այդ թվում ասպիրանտուրա եւ դոկտորանտուրա), ուսումնամեթոդական սեմինարների կազմակերպում,

բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության եւ լրացուցիչ կրթության կրթական ծրագրերի մշակում՝ հաշվի առնելով ԱՊՀ մասնակից երկրների ազգային յուրահատկությունները,

ուսումնամեթոդական եւ գիտահետազոտական նյութերի մշակում, փորձագիտական հաստատում եւ տարածում,

ԱՊՀ մասնակից պետությունների կրթական հաստատությունների, գիտահետազոտական կազմակերպությունների միջեւ համագործակցության զարգացում,

հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների ոլորտների հիմնարար եւ կիրառական ուսումնասիրությունների կատարում, ոչ հումանիտար բուհերի կրթական գործընթացներում հումանիտար գիտաճյուղերի դերի հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրում,

ԱՊՀ մասնակից պետությունների բուհերում հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների դասավանդման մասին տվյալների բազայի պատրաստում եւ պահպանում,

հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների ոլորտների ուսանողների, ասպիրանտների եւ դասախոսների միջբուհական փոխանակման աջակցում,

հանրակրթական, բարձրագույն եւ հետբուհական կրթության համակարգերի հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտաճյուղերի դասավանդման հաջորդականության հիմնախնդիրների մշակում,

Բազային կազմակերպության կողմից ուսումնասիրված հրատապ հիմնահարցերի վերաբերյալ միջազգային կոնֆերանսների եւ այլ միջոցառումների կազմակերպում:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բազային կազմակերպության հիմնական գործառույթներն են.

ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար ոլորտների, տնտեսության եւ իրավունքի բնագավառների ինտեգրացիոն գործընթացների ուսումնասիրում,

հումանիտար եւ սոցիալ-տնտեսական ոլորտների հիմնարար եւ կիրառական ուսումնասիրությունների հիմնական ուղղությունների վերաբերյալ հանձնարարականների պատրաստում,

կրթական եւ գիտահետազոտական ծրագրերի մշակման եւ ԱՊՀ մասնակից պետությունների կրթական եւ գիտահետազոտական համապատասխան հաստատությունների
հետ դրանց համատեղ իրականացման համադրում,

ԱՊՀ մասնակից պետությունների կրթական հաստատություններում հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների դասավանդման մասին տվյալների լրատվական բազայի (բանկի) ստեղծում:

4. ԲԱԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Բազային կազմակերպությունն իր գործառույթներն իրականացնելու համար իրավունք ունի.

ԱՊՀ համագործակցության բնագավառների համապատասխան օրգաններին ներկայացնելու իր իրավասության շրջանակներում պատրաստված հանձնարարականներ եւ փաստաթղթերի նախագծեր, Բազային կազմակերպության գործունեության մասին առաջարկներ,

ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության բնագավառների համապատասխան
օրգանների միջոցով հարցում կատարելու այս կանոնակարգով նախատեսված գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկությունների մասին,

ԱՊՀ մասնակից երկրներում հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների դասավանդման վիճակի եւ զարգացման, ինչպես նաեւ այդ ոլորտում կրթության զարգացման մասին տվյալների բանկ ձեւավորելու,

մասնակցելու ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության բնագավառների համապատասխան օրգանների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների աշխատանքներին, որոնք առնչվում են իր իրավասությանը,

իրականացնելու հրատարակչական գործունեություն:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Բազային կազմակերպության ղեկավարումն իրականացնում է ՍՊԲՊՀ-ի ռեկտորը.

2. Բազային կազմակերպության գործունեության կազմակերպման աշխատանքն իրականացվում է ՍՊԲՊՀ-ի հաստիքային անձնակազմի կողմից:

3. Կրթական հաստատությունների եւ գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից, որոնց հանձնարարում են ԱՊՀ մասնակից պետությունների կրթության ոլորտների ղեկավար օրգանները, Բազային կազմակերպությանը կից ստեղծվում է խորհրդակցական օրգան՝ Հասարակական խորհուրդ: Հասարակական խորհրդի վերաբերյալ կանոնակարգը հաստատվում է Բազային կազմակերպության ղեկավարի՝ ՍՊԲՊՀ-ի ռեկտորի կողմից:

Բազային կազմակերպությանը կից կարող են ստեղծվել եւ այլ խորհրդակցական օրգաններ, ինչպես նաեւ աշխատանքային խմբեր՝ ԱՊՀ մասնակից պետությունների գիտնականների եւ մասնագետների ներգրավմամբ:

4. Բազային կազմակերպության աշխատանքներին կարող են մասնակցել ԱՊՀ գործադիր կոմիտեի եւ Համագործակցության այլ մարմինների ներկայացուցիչներ:

5. Բազային կազմակերպության աշխատանքային լեզուն ռուսերենն է:

5. ԲԱԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Բազային կազմակերպության գործունեության ֆինանսական ապահովումը իրականացվում է այն միջոցներից, որոնք գոյանում են ի հաշիվ.

ըստ պայմանագրերի՝ Բազային կազմակերպության կողմից մասնագետների պատրաստման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման համար իրավաբանական եւ
ֆիզիկական անձանց կողմից կատարվող ֆինանսավորման մուտքերի,

հումանիտար եւ սոցիալ-տնտեսական գիտությունների ոլորտների ինովացիոն ծրագրերին եւ նախագծերի կատարմանը մասնակցելու համար կատարված մուտքերի,

ըստ պայմանագրերի եւ համաձայնագրերի՝ իրենց մեջ նաեւ փորձաքննություն եւ խորհրդատվություն, լրատվական ծառայությունների կատարում ներառող աշխատանքներ կատարելու համար պատվիրատուի վճարման,

միջազգային եւ ազգային ֆոնդերից ստացված մուտքերի,

իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կամավոր ներդրումների, որոնք կատարվում են կրթական, գիտահետազոտական եւ մշակութային համատեղ ծրագրերի եւ առանձին միջոցառումների համար՝ ֆինանսական եւ նյութական միջոցների, ռեսուրսների,

աշխատանքների եւ ծառայությունների տեսքով,
բարեգործական եւ մշակութային միջոցառումներից ստացված մուտքերից,
այլ աղբյուրների, որոնք արգելված չեն Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

2. Ֆինանսական միջոցները կարող են ներմուծվել թե՛ Համագործակցության մասնակից պետությունների ազգային տարադրամով, թե՛ ազատ փոխանակման տարադրամով:
Բազային կազմակերպության կողմից կարող են տրվել սարքավորումներ եւ այլ ունեցվածք, մտավոր կամ այլ սեփականություն՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ այն երկրի օրենսդրության, որն իրականացնում է այդպիսի սեփականության եւ նյութական արժեքների փոխանցումը:

3. Միջոցների օգտագործումը իրականացվում է եկամուտների եւ ծախսերի նախահաշվին համապատասխան, որը հաստատվում է Բազային կազմակերպության ղեկավարի՝
ՍՊԲՊՀ-ի ռեկտորի կողմից: Միջոցների օգտագործման հսկողությունն իրականացվում է համաձայն Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը:

4. Ֆինանսական միջոցները, որոնք ուղղված են Բազային կազմակերպության գործունեության ապահովմանը, պահվում են անձնական հաշվում՝ համաձայն անձնական հաշիվ վարելու՝ Ռուսաստանի Դաշնությունում ընդունված կարգին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԱՊՀ մասնակից երկրներում, համաձայն ազգային օրենսդրության եւ միջպետական (միջկառավարական) համաձայնագրերի, կարող են ստեղծվել Բազային կազմակերպության մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ:

2. ՍՊԲՊՀ-ի՝ որպես Բազային կազմակերպության գործունեության դադարեցման մասին որոշումն ընդունվում է ԱՊՀ պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից՝ սույն Կանոնակարգը հաստատած ԱՊՀ մասնակից պետություններից մեկի առաջարկությամբ, կամ կրթության ոլորտի համագործակցության ԱՊՀ մասնակից պետությունների խորհրդի առաջարկով՝ ըստ սահմանված կարգի:

* Որոշումն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003 թվականի ապրիլի 25-ից: